

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ախագ գիտախատող

haykanushm@mail.ru

«ԱՍՏՎԱԾ» ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր. *Բարբառ, խոսվածք, հայերեն, խորհրդանշան, Աստված, Գրիգոր Տաթևացի, հնչյունական զուգարանություն:*

Կրոնական հավատալիքի հիմքում ընկած է աստծու գաղափարը: «Երկրի վրա Աստծո մարմնավորումը այդ ըմբռնման կենդանի խորհրդանիշն է», այն նաև ազատության խորհրդանիշն է, և մարդ անհատի ազատությունը կվերանայի բուն ազատության, եթե նրա հոգում խոսի «աստվածային Բանը կամ նույնն է Խիղճը»¹:

*Աստված*² խորհրդանիշի լեզվական համապատասխանակն ավանդված է հնդեվրոպական նախալեզվից, պատկանում է հայերենի բառապաշարի բնիկ շերտին, հատուկ է հայերենի զարգացման բոլոր փուլերին, նաև տարածքային տարբերակներին: «Հայ մատենագրության մեջ *աստուած* բառը գործածվել է բավականին բարձր հանախականությամբ. այն հայ քրիստոնեական եկեղեցու տերմինաբանության առանցքային, առավել կարևորություն ունեցող միավորներից է»³:

Ժամանակի ընթացքում վերաբժնորվում է *աստված* հասկացությունը. տեղի է ունենում բառիմաստի որոշակիացում: Բազմաստվածությանը բնորոշ *աստվածներ* հոգնակի ձևի փոխարեն գործածական է դառնում եզակի թիվը՝ շեշտելով քրիստոնեական դավանաբանությանը հատուկ միաստվածությունը՝ ի դեմս Հիսուս Քրիստոսի:

Աստվածներ հոգնակի ձևի գոյությունն է վկայում Պոլսի բարբառի *աստվածները փար իջեցնել*⁴ («մեծ-մեծ խոստումներ տալ») արտահայտությունը, որի մասին Հ. Անադյանը գրում է. «Յոգնակին կը ցուցնէ, թէ այս ոճը նախաքրիս-

¹ Աթայան Է., 2005, 137:

² Տե՛ս Մսերեանց Մ., 1861–1862, 8–10:

³ Համբարձումյան Վ., 2002, 11:

⁴ Բարբառային օրինակները բերվում են ըստ բարբառագիտական մենագրությունների, բարբառային բառարանների, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ձեռագիր նյութերի, բարբառախոս վայրերում մեր կատարած հարցումների:

տոնէական դարձումը մըն է»⁵: Հեթանոսական մտածողության արդյունք կարելի է համարել նաև Սասուն-Մոտկանի տարածաշրջանին բնորոշ *ըսվածություն* («աստվածություն») հավաքական գոյականը՝ համարժեք *աստված* բառին. հմմտ. «*Ըսվածություն յիմաձալ, ջամպեճ ըզիրիշտագ*»⁶: Կարծում ենք՝ Արարատյան բարբառի Լոռու խոսվածքին բնորոշ *աստվածան* ձևը ևս հոգնակի կազմություն է⁷: Հմմտ. «*Բաս դու աստվածանից ըսկի չես վախ՞ւմ*»: Կարծում ենք՝ *աստվածան* հոգնակի ձևի հնչյունական ամփոփման հետևանք է նաև Լոռու, Քանաքեռի և այլ խոսվածքներին բնորոշ *աստան* գուգաբանությունը, որը, սակայն, ժամանակի ընթացքում ստացել է եզակիի իմաստ. «*Աստանի խրնջորել էմ տունրտ բրրիշակ ըլի գրիխտ*»⁸:

Գրական հայերենում, ինչպես նաև հայերենի բարբառներում *աստված* բնորոշվում է միայն իրեն հատուկ մի շարք մակդիրներով:

Հայոց լեզվի բառային կազմն ամփոփող բառարաններում բազմաթիվ են աստվածորոշիչ կամ աստվածայինին ստորոգելի⁹ ձևաիմաստային միավորները, որոնցից են՝ *ամենաբաշխ, ամենաբարեձև, ամենաբարեպաշտ, ամենաբալ, ամենաբժիշկ, ամենաբույժ, ամենագթած, ամենագլուխ, ամենաթագավոր, ամենաբույս, ամենապուրաստիպոտ, ամենախիղճ, ամենախնամ, ամենախնկավոր, ամենակատար, ամենահայր, ամենաճայն, ամենաշնորհող, ամենապահ, ամենապանծալի, ամենապարզևող, ամենաբար, անժամանակ, աշխարհահայր, աստվածագործ, արարչադիր, արարչախնդիր, արարչեղեն, բազկատարած, բազումողողմ, բան տյառն, գերագլուխ, գվարթուն, Է, Էություն, պետական, վեհն, վերնական, տեսնող, տեղունագույն, թեմական* («էական»), *թեմատես, փառաբանություն, փառք պատվիրան, պատգամատար, շնորհաբաշխ, նախահայր, նախախնամական, հոգնաստված* և այլն¹⁰: Ինչպես տեսնում ենք, հաճախադեպ են *ամենա*- գերադրական աստիճանի ցուցիչով կազմությունները:

Գրիգոր Տաթևացին աստծուն բնորոշում է *ողջոյնառաքն* նորաբանությամբ¹¹:

Նշված բառերի գերակշիռ մասը գրքային է, ունի բառարանային գործարանական արժեք, ժամանակակից հայերենում՝ գործածության շատ նեղ շրջանակ, ուստի և բնորոշ չէ հայերենի ժողովրդախոսակցական տարբերակին: Սրանցից մի քանիսը հայերենի բարբառներում կորցնում է հիմնական իմաստ-

⁵ Աճառեան Հ., 1913, 140–142:

⁶ Աղամյան Հ., 1969, 524:

⁷ Տե՛ս Ասատրյան Մ., 1968, 102:

⁸ Նույն տեղում, 156:

⁹ Աստվածաբանական գրականության մեջ գործածվող տերմին:

¹⁰ Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1969–1980: **Գաբամաճեան Ս.**, 1910: **Ճիգմեճեան Պ.**, 1954–1957 և այլն:

¹¹ Գրիգոր Տաթևացին աստվածամորն անվանում է *ողջոյնընկալն* [իմմտ. **Գրիգորյան Ս.**, 2012, 64]:

տագործառական ոլորտը կամ փոխարինվում է աստվածայինի այլ ստորոգելիներով, որոնց անդրադառնում ենք ստորև:

Աստված բառը մի շարք բարբառներում և խոսվածքներում պահպանում է գրական ձևը (Երզնկա, Արտամետ, Բերկրի, Աղաբագար, Մանագկերտի Բաղնոս, Ջուղա, Սուրմալուի Մոլլադամար և այլն): Տարածքային տարբերակների մեծ մասում հանդիպում են հնչյունական տարբերակներ: Երևանի (Բզդիր, Կողբ), Ղարաբաղի (Գորիս), Թիֆլիսի, Ագուլիսի բարբառներում շեշտվում է *աստված* բառի առաջին վանկի ձայնավորը՝ համապատասխանաբար դառնալով *ա՛ստվաձ*, *ա՛ստոձ*, *ա՛ստուձ*, *ա՛ստուձ* և *ա՛սված*:

Հայերենի տարբեր բարբառներում առկա է հնչյունական տարբերակների հետևյալ բաշխվածությունը (թվով՝ 55 տարբերակ):

ա) Արևելյան, նաև պարսկահայ բարբառախումբ. *ա՛ստրված* (Բայազետի Կարմիր գյուղ), *աստրված* (Սուրմալուի Բուր), *աստած* (Ագուլիս), *աստոժ* (Շամախի, Գեղարքունիքի Վերին Ճամբարակ, Ամբերդ, Փերիայի Դոդս), *աստոժ* (Լոռի) և այլն: Հմմտ. «*Ասվածէն իրէք խրնձօր վեր ընճանելի*» (Կոզեն)¹²:

Բարբառների արևելյան խմբակցության Խոյ-Մարաղայի կամ հարավարևելյան բարբառախմբի Մարաղայի բարբառում¹³ *աստված* բառի սեռական հոլովաձևն է *աստու*: 1828 թ. նշված վայրից Օրդուբադի Ազա բնակավայր տեղափոխվածների խոսվածքում *աստու*-ն ընկալվում է որպես բառի ուղիղ, այսինքն՝ ուղղական հոլովաձև: Հայտնի է, որ նոր բնակավայրում՝ լեզվական նոր միջավայրում, գրական լեզվի ազդեցությամբ Մարաղայի բարբառը տեղի է տվել հատկապես հոլովական համակարգում դադարել է գործել ձայնավորների ներդաշնակության օրենքը: Միջին և նոր սերնդի լեզվական հաղորդակցության միջոց է դարձել ժողովրդախոսակցական հայերենը՝ բարբառային որոշակի տարրերով: Կարելի է ասել, որ մինչև 20-րդ դարի 80-ական թվականները Վերին և Ներքին Ազայում բնակվող միջին և նոր սերունդը, հին սերնդից լսելով *աստու* թեք ձևը, ընկալել է որպես բառի ուղիղ ձև, իմաստափոխել է այն, որի հետևանքով ստեղծվել են քերականական համանուններ:

Արդվինի, Հավարիկի և Արեշի բարբառային տարածքներին բնորոշ է *աստուված*, Ղարաբաղի բարբառի Պողոսագոմեր գյուղի խոսվածքին՝ *աստուված* հնչյունական տարբերակը, որում գրաբարյան *ու (ւ)*-ի կողքին ավելացել է համարժեք *վ*: Տվյալ դեպքում հին հայերենից պահպանված հնչյունական իրողության կողքին առկա է նորը: Հմմտ. «*Աստուված չի անի*»¹⁴: «*Աստուված խելք փայ տալիս դու հորսէ՞ էր*» (Արեշ)¹⁵:

¹² Բաղրամյան Ռ., 1961, 232:

¹³ Բարբառների դասակարգման մասին տե՛ս Զահուկյան Գ., 1972, 132–136:

¹⁴ Ալավերդյան Ս., 1970, 189:

¹⁵ Լուսենց Ա., 1982, 246:

Բառագործածության հաճախականությամբ պայմանավորված՝ նույն բարբառատարածքում կարող են գուգահեռաբար օգտագործվել *աստված* բառի մի քանի հնչատարբերակներ: «Աստուած բառը ժողովրդական լեզուում գանազան կրճատումների է ենթարկվում. օրինակ, նույն զօկ բարբառում՝ *Աստված, Աստած, Ասված*, սեռ. հ. *Աստուծու, Ասծու, Աստու*»¹⁶:

բ) Արևմտյան բարբառախումբ. *աս(տ)ված* (Նիկոմեդիայի Արմաշ), *աստվօժ* (Մարաշ), *ասդված* (Տիգրանակերտ, Սուչավա), *ըսդված* (Սասունի Ընգուզնակ և Սաղդուն), *ասսված* (Վան, Թիմարի Մարմետ և Պողանց), *ասսված* (Մուշ), *ասվօժ* (Հաջըն), *ասքած* (Ակն), *ասքօժ* (Չեյթուն), *աստունձ* (Յողուն-օլուկ, Հաջի-Հաբիրի) և այլն: Հմմտ. «*Աստունձ յէր բուլ խազնին զըսմատրտ շօղ թող ուղու*» (Խտրբեկ)¹⁷ <«*Աստված իր լի գանձարանից բաժինդ շատ թող տա*»):

Պոլսի բարբառին բնորոշ է *ս* բաղաձայնի դրափոխությամբ, *տ* խուլի կորստով և ծ խուլի ձայնեղացմամբ *ասված* հնչյունական գուգաբանությունը:

Կան հնչյունական գուգաբանություններ, որոնք ընդլայնում են կիրառման շրջանակը՝ գործածվելով և՛ արևելյան, և՛ արևմտյան, և՛ պարսկահայ տարածքի բարբառներում, ինչպիսիք են՝ *աստրված* (Ղարաբաղ, Իջևանի Ծաղկավան, Սպարկերտի Տոսու և Վերին Հուրուք, Խիզանի Պոռնենց, Էջմիածնի Աղավնատուն և Հայթաղ), *աստված* (Խոտրջուրի Միջին թաղ, Սասունի Գոմք, Խութի Թաղավանք, Փերիայի Շուրիշկան, Իգդիրի Հախավերիս), *աստրված* (Արծափի Կոզովիտ, Բուլանուխի Գյաբոլներ, Բյուրականի Երևան թաղամաս¹⁸, ԼՂՀ Մարտակերտի Առաջաձոր, Ջանյաթաղ և Մաղադիս), *ասված* (Բուլանուխ, Երզնկա, Կարին, Մարաղա, Մալմաստ, Աշտարակի Անտառուտ, Կոզեն) և այլն:

Տարածքային նման բաշխվածությունը ևս խոսում է *աստված* բառի լեզվական առումով համընդհանուր լինելու, հաճախակի գործածվելու մասին:

Ինչպես արդեն նշեցինք, աստվածայինի ստորոգելիները գրական հայերենում և հայերենի բարբառներում արտահայտվում են տարբեր բառախմբերով: Պոլսի, Նիկոմեդիայի, Ադաբազարի և Տիգրանակերտի բարբառներում գործածվում է *ջրշմարիդ* բառը՝ միայն *ջրշմարիդ աստված* երդման բանաձևի մեջ: Շեն բառի *շէօն* հնչատարբերակը ծայր հյուսիսարևմտյան միջբարբառախմբի Սուչավայի բարբառում մակբայաբար կիրառելի է միայն *աստված շեն պահե* բարեմաղթանքի մեջ¹⁹: Մուշի բարբառի Բուլանուխի խոսվածքում *հազարաստունեղծ* ածականն իմաստի նեղացման հետևանքով դարձել է պատվանուն, որով բնորոշվում է միայն աստված՝ «*մեկ աստված ու հազարաստունեղծ*»²⁰: Վանի բար-

¹⁶ Մարգսեանց Ս., 1883, 25:

¹⁷ Հանանյան Գ., 1995, 158:

¹⁸ Արագածոտնի մարզի Բյուրական բնակավայրը բարբառախոսները հիմնականում բաժանում են 2 թաղամասի՝ Երևանի և Խոյեցիների:

¹⁹ Աճառյան Հ., 1953, 281:

²⁰ Բենսե, 94:

բառում *անկալատ* («անպակաս, անթերի»), *անեզական* (*անեզական աջը*՝ «աստծու ձեռքը»), *անխուն* (<ան+հուն, «անսահման», հմմտ. «Տու քո *անխուն* աստված սիրես») ածականներով բնորոշվում է միայն աստված: Խարբերդի բարբառի Բալուի և Մուշի բարբառի Բուլանուխի խոսվածքներին հատուկ է *անահուն* հոդակապավոր տարբերակը: *Անհուն* և *անահուն* տարբերակները համեմատելիս կարելի է նկատել երկրորդ՝ հոդակապավոր բարդության՝ իմաստային առումով ավելի շեշտված, ընդգծված լինելը: Կարելի է ասել, որ տվյալ դեպքում *ա* ձայնավորը (հոդակապը) ձեռք է բերում իմաստատարբերակիչ հատկություն՝ ինչ-որ առումով համարժեք ածականի *ամենա*- և *ամենից* գերադրական աստիճանի ցուցիչներին:

Աստված խորհրդանշով են պայմանավորված Մուշ-Բուլանուխ բարբառային գոտում հատուկ *տրվածուրիկ*, Բեյլանի բարբառի *ասդունէ* և *դրվիւնօն* (=«տրված») բառանունները՝ «աստծուց տրված, երկնատուր», նաև «նվիրական» իմաստներով: Այդպես նաև *ցասում*/*ասսում* բառը (Մուշ, Ալաշկերտ, Վան, Երևան, Սալմաստ), որով բնորոշվում է միայն աստվածային բարկությունը²¹:

Բարբառային բառապաշարում *աստված* հասկացությունը և աստվածային գորությունը համադրվում են *հոր*, *տիրոջ*, *լույսի*, *երկնքի*, *անսահմանի* և *երկնագույն*, *կապույտ* գունանունների հետ:

Հարավարևմտյան կամ Կիլիկիայի բարբառատարածքում Սուրբ երրորդության²² Հայր *աստված* կողմի անվանումներից են *ասված բաբա* (Տիգրանակերտ), *ասլօձ բաբիգ* (Հաջըն) բառակապակցությունները՝ բաղադրված պարսկերեն باب (բաբա՝ «հայր») բառով: Նշված բարբառային գոտում Հայր աստված, որին «Տերունական աղոթքում» դիմում են «Հայր մեր» կոչականով, ունի հոմանշային հետևյալ դրսևորումները՝ *միր պուպր* (Մարաշ), *մէյ պօպր* (Չեյթուն), *մէյ իլկինքր կինէյ պօպր* (Հաջըն), *հա՛ր միր իրզինքի // օյ միր բօբր* (Բեյլան), *մեր բիբր // միր բուէթր* (Քեսաբ), *միր դուդր* (Հաջի-Հաբիրի), *միր դուդա* (Արամո), *ես մէր տուտր* (Սվեդիա): Կարծում ենք՝ *դուդա* // *դուդր* // *տուտր* բառերը թուրքերեն dede («պապ») բառի հնչատարբերակներն են: Հմմտ. «*Ույ միր դուդր, քի յրզէնքն իս*» (Հաջի-Հաբիրի): «*Ուէօյ մեր բուէթր, սիւրի թրդ ըննիու էնէօմնրթ*» (Քեսաբ): «*Յա միր դուդա իյ գուս յերզէնքա, սաւրի ըննու քու անաւնա*»²³: «*Միր պուպր քի իրկինքն իս, քինիտ անունիդ սուրբ թրննօ*» (Մարաշ): «*Օյ միր բօբր, քի իրզինքն իս, քինիտ անունիտ սուրի թրդ ըննօ*» (Բեյլան)²⁴:

²¹ Աճառեան Հ., 1926, հ. 4, 451:

²² Տե՛ս Երրորդություն, 1870, N 46, 92–94:

²³ Տե՛ս Աճառեան Հ., 2003, 536–537:

²⁴ Քյուսեյան Հ., 2008, 14–15:

Բարբառային նյութերից պարզվում է, որ *աստված* բառով արտահայտվում է Սուրբ երրորդությունը, և սակավադեպ են այս եռամիասնության միայն մեկ կողմը հատկանշող հոմանիշները: Մեր ուսումնասիրության ընթացքում Սուրբ երրորդության եզակի տարբերակի հանդիպեցինք միայն Արամոյի բարբառում: Հմմտ. «Օրշինալ համարում ու բոլորը հաղաչ ընթանալազ սաւրի Էրօրթօւէնս գԴուդա ու գՋրթթա ու գՀօրէն սաւրիս, համագալքի յէդայն յէդայնք» (=«Օրինեալ համագոյ եւ միասնական, անբաժանելի Սուրբ երրորդութիւնն, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ յաւիտեանս յաւիտենից»): «Մաջդ Դուդա ու Ջրթթա ու Հիթէն Սաւրիս»²⁵ (=«Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»): Մաղթանքի նշված բարբառային ձևերի, ինչպես նաև Սվեդիայի, Բեյլանի, Չեյթունի, Մարաշի, Արամոյի տարածքային տարբերակներով «Տերունական աղոթքի» առկայությունը կարելի է բացատրել Կիլիկիայի բարբառի՝ Կիլիկիայի հայոց թագավորության պետական լեզու լինելու հանգամանքով:

Անտիոքի կամ ծայր հարավարևմտյան բարբառախմբից և Կիլիկիայի կամ հարավարևմտյան միջբարբառախմբից բացի բարբառային մեկ այլ տարածքում «Հայր մեր» տերունական աղոթքն ասվում է միայն գրաբարով:

Սուրբ երրորդության գաղափարին են առնչվում Պոլսի բարբառի՝ *հյուր* ↔ *տանտեր* հարաբերությունն արտահայտող հետևյալ երկխոսությունը՝ «սուրի սաւիւս իրեք է» (ասում է տանտերը, երբ հյուրին երրորդ անգամ որևէ բան է հյուրասիրում և հորդորում, որ վերցնի), «սուրի սաւիւս չէ, քի իրեք հեղ լսեն» (ասում է հյուրը, երբ ուզում է մերժել իրեն երրորդ անգամ առաջարկված մի բան)²⁶:

Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքներում և Հավարիկի բարբառում *աստված* բառին հոմանիշ է *միեանտեր* բարդությունը. կարծում ենք՝ «միստեր // միսկ տեր». հմմտ. «Սուտին տունը Միեանտերը քանդը» (երդման արտահայտություն)²⁷: Լոռու խոսվածքում հայր աստված բնորոշվում է *աննառ մին* բառակապակցությամբ. հմմտ. «Ո՛վ աննառ Մին, որ ամենին միացնում ես մի կյանքում»²⁸:

Սուչավայի բարբառում աստծուն անվանում են *յերզնավօր*, Ոգմում՝ *յերզնատր*, Թիֆլիսում՝ *յիրզնատր*, Պոլսի և Խոտրջուրի բարբառներում՝ *էնսավոր* («երկնավոր»): Հմմտ. «Մ՛ընէր անօրէն, կը գտնաս Էնսավորէն»²⁹ // «Մը հեղ անօրեն, կը կրթնաս Էնսավորեն» (= «Մի՛ արա/լինիր անօրեն, կպատժվես աստծուց»): Այս հոմանիշը բնորոշ է նաև Արցախի Ասկերանի Մղնախ գյուղի խոս-

²⁵ Աճառյան Հ., 2003, 538–539:

²⁶ Աճառյան Հ., 2009, 133:

²⁷ Տեր-Պողոսյան Գ., 1921–1922, գիրք Ա–Բ, 177:

²⁸ Թումանյան Հ. [http://granish.org/hovhannes-tumanyan]:

²⁹ Աճառյան Հ., 2009, 125:

վածքին՝ *Եռնալոր* հնչյունական գուգարանությամբ: Տվյալ դեպքում, կարծում ենք, կրկնակ *ռ*-ի միջոցով բարբառախոսներն արտահայտում են երկյուղ և ականաձանք գերագույն ուժի նկատմամբ: *Երկնալոր* ածականը Պոլսի բարբառում համադրվում է *դատալոր* գոյականի հետ՝ կազմելով *է՜յնալոր դատալոր* («երկնավոր դատավոր») բառակապակցությունը՝ «արդարն ու անիրավը, դրախտայինը և դժոխայինը սահմանող» իմաստով: *Է՜յնալոր* բառի է՛ ձայնավորն արտաբերվում է երկար, տևական հնչերանգով՝ թերևս ընդգծելով աստվածային գոբությունը: Կարող ենք ասել, որ տվյալ օրինակում հնչերանգը ևս իմաստի սաստկացման դեր է կատարում:

Մեբաստիայի բարբառում *դ՛ատալէր* բառը ենթարկվել է իմաստի նեղացման, գործածվում է միայն *աստված* իմաստով՝ նկատի ունենալով աստծու՝ երկնային արքայության դատավոր լինելը: Կարծում ենք՝ *դատալոր* հասկացությանն է առնչվում Քանաքեռի խոսվածքի *հախ միայն տեղր* կազմությունը՝ բաղադրված թուրքերեն *hakim* («իրավունք») բառով: Պոլսի բարբառում *աստված* բառին հոմանիշ է *վերին* ածականը (հմմտ. «Վերինը գիտե՞»³⁰ = «Միայն աստծուն է հայտնի»): Արարատյան բարբառում առկա է *վերնէրի տէր*, այսինքն՝ «երկնքի ու երկնային մարմինների տեր», *իյգինք և իյգիյ ընձեղանի* (Հաջըն), այսինքն՝ «երկինք և երկիր ստեղծող, երկնայինների և երկրայինների արարիչ» (հմմտ. «Հայ լուսացով լուսն ի պայի, Փառավորյալ *իյգինք և իյգիյ ընձեղանի*»)³¹: Խարբերդի բարբառում *աստված* բառի հոմանիշն է *դեղձող* («ստեղծող») ենթակայական դերբայը, Նախիջևանի տարածաշրջանի Ագայի խոսվածքում *յէր-ջինջ-ջէրին* (*վրկա*) հարադիր կազմությունը: Կապանի տարածաշրջանի Ներքին և Վերին Խոտանան գյուղերում աստծուն անվանում են *յէրէ կապօտ*, Ղարաբաղում՝ *թատ աստված* (*թատ*՝ «կապույտ», որից՝ *թատ աստու իրէս*, այսինքն՝ «երկնիք»), Մուշում՝ *կաբուրվոռ ա՛ստված* և այլն: «*էն կապօտը*» («աստված վկա») երդման արտահայտությունը բնորոշ է Ղարաբաղի և Կապանի տարածքային տարբերակներին:

Կարնո, Մուշի (Բաղեշ), Թիֆլիսի բարբառներում *կապույտ*-ի փոխարեն առկա է *ժանգառի* ածականը («բաց կանաչ»), որից էլ կազմվում է *ժանգառի աստված* երդման արտահայտությունը՝ նաև «կապույտ երկինք» փոխաբերական իմաստով:

Արարատյան բարբառի Երևանի խոսվածքում, Մուշի, Սասունի, Թիֆլիսի և այլ բարբառներում առկա է *յես իմ հոգին* // *յես ու իմ հոգին* երդման ձևը, որի «աստված վկա» իմաստից կարելի է ենթադրել, որ նշված վայրերում *աստված* բառին հոմանիշ է *հոգի* գոյականը, այսինքն՝ տվյալ տարածքում որպես *աստված* բառի համարժեք՝ նկատի է առնված եռամիասնության Մուրբ հոգի կող-

³⁰ Աճառյան Հ., 2009, 134:

³¹ Գաապարյան Հ., 1966, 142:

մը³²: Պարսկահայ տարածքի բարբառներում գործածվում են Սուրբ երրորդության Հայր և Որդի կողմերը միաժամանակ՝ *հայր ու որդի*՝ որպես զարմանքի, անհամաձայնության դրսևորում, որի հոմանիշը կարելի է համարել *Բասու քեզ Քրիստոս* արտահայտությունը³³:

Պոլսի միջբարբառային տարածքում առկա է *փրկիչ* հոմանիշը: *Աստված* → *Փրկիչ*, ապա «Սուրբ Փրկիչ» անվանումով պայմանավորված իմաստափոխության հետևանքով Պոլսի բարբառում կազմվել են *փրկիչին խենթը*, *փրկիչին փախուկը*, *փրկիչ-բորդիչ* (= «փրկիչ բորբից»), *հոռոմների փրկիչը*, *փրկիչեն փախած խենթ* («սակավամիտ») բառակապակցությունները՝ «ցնորված», «խենթ» իմաստներով: Իմաստային նման բացասական անցումը, թերևս, կատարվել է Պոլսի ազգային հիվանդանոցի «Սուրբ Փրկիչ» անունից (հիվանդանոցն ունի նաև նյարդային հիվանդների բուժման բաժանմունք):

Բարբառային բառապաշարում որոշակի քանակ են կազմում *աստված* բառով կազմված բաղադրությունները. ինչպես, օրինակ՝ *աստվածաբաշտ* (Պոլիս) // *ասվածաբաշտ* (Մալաթիա) // *ըստուծապաշտ*, *ընաստոծ* (= «էն աստված») (Գորիս), *աստվածասեր*, *անասվաց* (Առտիալ, Սուչավա), *անաստոծ* // *անասված* // *անասված* (Մալաթիա), *Ասպատուր* (Վան) և այլն: Մուշ – Տիգրանակերտի բարբառի Բուլանուխի խոսվածքում գործածվում է «*Գութան, գութան աստվածաբուս, Գութան գրնաց հրտ առափուս*» շուտասելուկը³⁴:

Մի շարք կազմությունների իմաստային հիմքում ընկած են սնոտիապաշտական ընկալումներ. օրինակ՝ բուլանուխցիների բառապաշարում *ասվածամորթ* նշանակում է «մարդու ձեռքով չմորթված, այլ սատկած, իբրև թե աստծու մորթած», իսկ *ասվածամերք*՝ «թթված կաթի ինքնիրեն, առանց մերանի կամ մակարդի մածուն դառնալը, մերվելը»³⁵:

Աստված հիմքով են կազմված *աստվածածին* և *աստվածամայր* քրիստոնեական տերմինաբանության կարևոր միավորները:

Աստծու(ն) հատկացուցիչն է առկա *ասու* // *ասսու օր* (Մուշի Դուգնուգ, Չառ, Ալափարս և Թդիթ), *աստուծուն օրը* (Պոլիս), նաև՝ *աստվածային իր օրը* (Նոր Նախիջևան), *աստուծան առտուն*³⁶ (այսինքն՝ «ամեն օր»), *ասրնձ՛ու մէքիզ* = «աստծու ոչխարիկ, մաքի» (Զեսար) «զատիկ բզեզը», *ասսու գ՛օղիզ* (Գյումրի),

³² Տե՛ս Հոգին սուրբ, 1870, N 48, 141–142:

³³ Օրինակն ըստ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Լ. Հովսեփյանի (բանավոր հաղորդում):

³⁴ Բենսե, հ. 2, էջ 33 [ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ձեռագիր նյութ]:

³⁵ Նույն տեղում:

³⁶ *Աստված* բառով կազմված նկարագրական մյուս արտահայտություններից տե՛ս Աճառեան Հ., 1913, 140–142: Նաև՝ Ամատունի Ս., 1912, 62:

աստրձու կողի // ասծու կողի (Սևերեկ) «ծիածան» բառակապակցություններում³⁷:

Անդրադառնալով *աստված* բառի սեռական հոլովածների առանձնահատկությանը՝ Յ. Կարստը գրում է. «Ժամանակակից ավանդույթի համաձայն, *աստուած* գոյականից կազմվում է *աստուծոյ* սեռականը a-ի կորստով, իսկ «կուռք, հեթանոսական աստված» նշանակությամբ, ընդհակառակն, կանոնավոր ձև է *աստուածոյ*»³⁸: Մեր ուսումնասիրության ընթացքում սեռականի նման ձևի չհանդիպեցինք: Մի շարք բարբառատարածքներում առկա են հատկացուցչի հետևյալ հոլովածները. *ասուծու* (Չեյթուն), *աստու* (Մարադա), *աստու* (Կարին, Շամախի), *աստրձու* // *ասծուծու* // *ասծու* (Ղուխ), *ասծի* (Կոզեն) և այլն:

Հայերենի բարբառներում *աստված* բառով կազմվում են նաև դարձվածքներ, երդման, օրհնանքի, բարեմաղթանքի, անեծքի բանաձևեր, նկարագրական արտահայտություններ, խոսքի փոխաբերացված միավորներ և այլն: Նման կազմությունները բարբառային բառապաշարում ունեն թե՛ դրական և թե՛ բացասական իմաստ՝ հատկանիշի սաստկականությամբ. քիչ չեն նաև չեզոքություն արտահայտողները: Այդպիսի կազմություններից են՝ *ասպած ծեր սեր ժուռ պահի* (Վան), *ասդունձը աշք յրվան* (Սվեդիա)³⁹ (= «աստծու աշքը վրան»), *ասպած է գեզի հեղ էլի* (Համշենի Խոփա և Բորչկա)⁴⁰ և այլն:

Լռու խոսվածքի *աստոծ միշին ման ա էկեղ* նկարագրական արտահայտությամբ ընդգծվում է տվյալ վայրի գեղեցկությունը, ինչպես՝ «Էս դաշտի միշին Աստոծ ա ման էկեղ»: *Աստուծո հրդեցր* (= «ուղի») *վրա իլալ* (Ղարաբաղ), այսինքն՝ «ճիշտ կենսակերպ վարել». հականիշը՝ *աստուծո հրդեցեն տծս կ'ալ* («անօրինություն կատարել»):

Բացասական հատկանիշ են արտահայտում *աստծու տիր սրտից հանել* («հանդգնել»), *աստծու էրեսիցը թափած* («անամոթ») (Երևան), *աստրծուն աստո խանչել* (Ալաշկերտ), «*Սուրբ աստվածն*» *ալ մոռնալ*⁴¹ (Ղուլթիկ, Վան) («ամբարտավանել») դարձվածքները: Վերջին դարձվածքն առնչվում է ամենից շատ ասվող, եկեղեցական բոլոր խորհուրդների և ծեսերի ժամանակ հնչող «Սուրբ աստված, սուրբ և հզոր» ամենօրյա աղոթքին, այսինքն՝ անգամ դա մոռանալ:

Բարբառային բառապաշարում մեծ թիվ են կազմում անեծքի և հանդիմանության արտահայտությունները. վրեժխնդրությունը, չկամությունը և չարությունն ի կատար ածելը հանձնարարվում է աստծուն. *ասպած քեզի խենդասնա օջ՝*

³⁷ *Ծիածան* հասկացության բառագույգաբանությունները քննել է Ա. Հանեյանը [տե՛ս *Հանեյան Ա.*, 2005, 87–104]:

³⁸ Կարստ Յ., 2002, 49:

³⁹ Անդրեասյան Տ., 1967, 135:

⁴⁰ Վարդանյան Ս., 2009, 181:

⁴¹ Տե՛ս *Ժամագիրք ատենի*, 1999, 298–299: Նաև՝ *Ժամագիրք ատենի*, 2003:

«աստված քեզ չուրախացնի» (Համենի Խոփա և Բորչկա)⁴², *աստված դատաստանդ անի, աստված գրիսիդ քար գրցի* և այլն, և այլն:

Մարդու բացասական հատկանիշները բնորոշվում են հետևյալ բառակապակցություններով՝ *աստուծո եգր*՝ «բութ» (Պոլիս), *աստուծո կուր* (Կարին, Պոլիս), *աստու խենթը* (Սեբաստիա), *աստրծու պէծ ու կրրակ*, *աստրծո պատիժ // պատիջ* (Երևան, Նոր Նախիջևան, Մուշ), *աստրծու բէղիլք* (Տավուշի Չինչին) և այլն: Ենթադրելի է, որ վերջին բառակապակցության *բէղիլք* բաղադրիչը կազմված է պարսկերեն **بے** (*բէ*) ժխտական նախածանցով և թուրքերեն *dil* («դիլ»)՝ «լեզու» բառերից, այսինքն՝ «աստծու կողմից ստեղծված այնպիսի բացասական էակ, որը հնարավոր չէ անգամ լեզվով նկարագրել, մի անուն դնել»: Կարելի է նաև թարգմանել որպես «աստծու անլեզու», այսինքն՝ փոխաբերաբար՝ 1) «սակավամիտ, խելապակաս», 2) «հեզ»: Նշված բառակապակցություններում *աստված* բաղադրիչն էլ ավելի է շեշտում բացասական հատկանիշը:

Համառություն են մատնանշում *մեռնել, մեղա աստծու չասել* (Աշտարակ, Լոռի), *օխտը գոմեշ տալ, մեղա աստծու չասել* (Ծիրակ, Նարման) նկարագրական ձևերը:

Հարավարևելյան բարբառախմբի Դավրեժի խոսվածքում ճարպիկ գողը բնորոշվում է *աստուծո գտակր ձեռքն ընկնի, կր գողնա*⁴³ նկարագրական արտահայտությամբ:

Աստուծո լեռները (Նոր Նախիջևան, Պոլիս) հատկացուցիչ – հատկացյալ բառակապակցությունն ունի որոշակի բացասական երանգ. այսպես՝ «*Ան ալ ի՞նչ տեղ է որ, աստուծո լեռները*», այսինքն՝ «հեռու, ամայի է»⁴⁴: Երևանի խոսվածքի *աստված աղունն աղացել* է նկարագրական արտահայտությամբ բնորոշվում է անհոգ, անտարբեր մարդը, Պոլսի բարբառի *աստուծո աղերսագիր տվող* ձևով՝ չափազանց բարձրահասակ անձը: Այդպես նաև՝ թշվառ լինելը նշվում է *աստված ողորմիին բան* արտահայտությամբ, այն է՝ «այնքան թշվառ, որ կարող է ողորմել միայն աստված»:

Նշված օրինակների գերակշիռ մասն ունի ընդհանուր բարբառային բնույթ:

Հուսահատության պահին աստծուն դիմելու աղերսական իմաստ ունեն մի շարք հարադրավոր կազմություններ. *յաստուճ իննիլ* (Սվեդիա)⁴⁵, *աստված աստվածից անել // կանչել* (Արարատյան), *աստրծու չօքերուց կախվել* (Կարին, Մուշ), *աստրծու փեշերը (փեշը) կրտորտել* (Արարատյան) և այլն:

⁴² Վարդանյան Ս., 2009, 181:

⁴³ Աճառեան Հ., 1913, 141:

⁴⁴ Աճառեան Հ., 1913, 141:

⁴⁵ Անդրեասյան Տ., 1967, 135:

Սահմանականություն են նշում նաև հետևյալ նկարագրական ձևերը. *աստված էն հավր չխուեցնի, աստված հեռու տանի, աստված չանի՝ «չկատարվի»* (Արարատյան, Քանաքեռ), *աստված խաբուլ չէնա, աստված չի հանդուրժի՝ «անիրավություն է»* (Մուշ, Բուլանուխ), *կուս կողմանէ աստծո՝ «աստծու կողմից»* (Թիֆլիս), *աստված քու տուն չակօլէ*⁴⁶ «անհաջողության չհանդիպես» (Մուշ, Բուլանուխ), *դեր աստուծ չուկայրրն՝ «երանի չգան»* (Սվեդիա)⁴⁷, *հի՞նչ էս քարավ աստծուն տամ* (ԼՂՀ Մարտակերտ) «հանդիմանություն հանիրավի դժգոհողներին» և այլն:

Աստված բաղադրիչով առածներն ու ասացվածքները «Հայկական առածանիում» շուրջ 200-ն են⁴⁸: Հմմտ. «*Ճամայօրտի բ՛անը աստրձունն է*» (Ծիրակ)⁴⁹: «*Ասված սարր տրսնայի, ծիւնը տրնէլի*» (Ուրմիա)⁵⁰ // «*Աստուծ կր տրսնա զէլը, կր թիլլի զծայն*» (Յողուն-օրուկ)⁵¹ // «*Աստուծ զր դրսնա զրայր՝ զր թիլլի զծայն*»⁵² : «*Աստված մէգ, ուր տէղծուգ հրգար ու մէգ*» (Աշնակ)⁵³:

Էնկյուրիայի թրքախոս հայերի մեջ տարածված է *ալլահտան շնօրք իստէ* («աստծուց շնորհք ուզիր») խորհուրդ-ասացվածքը:

Աստված բառին հոմանիշ արաբերեն *ռաբբի* (راحبا = «ով աստված») օտարաբանությամբ է կազմված հայերենի բարբառներում լայնորեն տարածված *յարաբ* («արդյոք») բառը⁵⁴:

Նոր Նախիջևանի բարբառին բնորոշ է *էյպոհմը* (= эй бог) ռուսաբանությունը՝ «աստված իմ» իմաստով:

Աստվածային կարևոր ստորոգելիներից է հրեշտակների դասը, որին Նոր Բայազետի, Մուշի, Երզնկայի և այլ բարբառներում համապատասխանում է *գօրքուլ* գործիական հոլովածնը՝ համարժեք «ամուր, հզոր» ածականներին: Մուշի բարբառի Բուլանուխի խոսվածքում կա *չորեք կողման սրրբեր* արտահայտությունը, որով նշվում է հրեշտակների դասը: Փոքր Ասիայի բարբառախմբի Կարնո բարբառի *իշու հրեշտակ* ծաղրական արտահայտությունը բնորոշում է ծույլ, անբան, նաև պարզամիտ մարդու: Հմմտ. «*Հրեշտակնին քէգ պրհապան կաննին*» (Բուրդուր)⁵⁵ // «*Հրորշտագնէն բահաբան թրդ ըննուն քի*» (Խտրբեկ)⁵⁶:

⁴⁶ Ակոռի տեղանունից առաջացած:

⁴⁷ Անդրեսայան Տ., 1967, 140:

⁴⁸ Հմմտ. Ղանալանյան Ա., 1951:

⁴⁹ Գևորգյան Լ., 2012, 136:

⁵⁰ Ասատրյան Մ., 1962, 183:

⁵¹ Աճառյան Հ., 2003, 533:

⁵² Անդրեսայան Տ., 145:

⁵³ Գալստյան Լ., 2006, 234:

⁵⁴ Տե՛ս Աճառյան Հ., 1952, 204:

⁵⁵ Մկրտչյան Ն., 1971, 223:

⁵⁶ Հանանյան Գ., 1995, 159:

Ասորերենից թուրքերենի միջոցով Բեյլանի բարբառին է անցել *մէլէզ* հոմանիշը (հմմտ. «Տուն բէքլէմիշ գ'էնիս, ամնա Գաբրիէլ մէլէզը բէքլէմիշ չէնը»)՝⁵⁷:

Արևելյան բարբառային տարածքում (Ղարաբաղ, Բայազետ) հանդիպում է *հրեշտակ* բառի հականիշ իմաստով գործածություն: Ղարաբաղի բարբառի Մարտակերտի խոսվածքի *հրիշտրակը քեզ տանէ* անեծքի և հանդիմանության արտահայտություն է, որին հոմանիշ են *կա՛յէ՛, քյուլլի* բառերը՝ «սատանան քեզ տանի» իմաստով: Կամ՝ նույն տարածքում «Նրա հի՛նչն ա դաշանգ, հունցա հրիշտրակ ինի», այսինքն՝ «հրեշտակի նման շատ տգեղ ու չար է»⁵⁸:

Նոր Բայազետի բարբառում *հրեշտակ* բառի բացասական իմաստն արտահայտվում է տարակուսանքի, հարցական հնչերանգի միջոցով. *խրրիշտրակ'ի ա* (այսինքն՝ «շատ տգեղ է»), որից էլ՝ *խրրիշտրակակոխ* բարդությունը՝ «սատանայական», «սատանայակոխ» իմաստներով⁵⁹:

Մասի և ամբողջի իմաստային անցման հետևանքով մեծարվում է նաև աստծո աջ ձեռքը, այսինքն՝ *աջը՝* որպես ապավինության, փորձություններից և մոլորություններից պաշտպանող միջոց: Գոյականաբար հանդես եկող *աջ* ածականը, որպես կրոնակեղեցական բառապաշարի միավոր՝ բարբառներում գործածվում է *սուրբ* մակդիրի հետ (սուրբ աջ):

Արարատյան բարբառի Քանաքեռի, Մեղրու բարբառի Կարճևանի, Ղարաբաղի բարբառի Շամախու խոսվածքներում հանդիպում է գրական հայերենին հաստուկ *աջ* ձևը: Բարբառների մեծ մասում ունենք ջ ձայնեղ պայթականի շնչեղ խլացում՝ *աչ*: Արարատյան (Լոռի), Ղարաբաղ (Բուրդուր), Թիֆլիս, Ջուղա, Ակն, Մուշ, Շատախ, Ոզն, Ուրմիա (Մալմաստ) և այլն:

Սակավ թվով վայրերում ունենք *ա > ա՛* քմային, *յէ* երկբարբառային և *ջ > ճ* բաղաձայնական անցումներ. *ա՛չ* (Մոկս, Ոզն), *յէօջ* (Ագուլիս), *աճ* (Մուշ, Ալաշկերտ, Սվեդիա): Այս ընդհանուր պատկերից տարբերվում են Համշենի բարբառին բնորոշ *անի՛գ* փոքրացուցիչ-փաղաքշական ածանցավոր և *սաղ* (թուրք. *sağ*) փոխառյալ հոմանիշ ձևերը՝ «աստծո ձեռքը» իմաստով:

Աջ ածականը բարբառներում ևս բազմիմաստ է և նշանակում է նաև՝ «աջի ձևով շինված եկեղեցական անոթ, որի մեջ ամփոփվում է որևէ սրբի նշխար»:

Այսպիսով, *ասու/ած* բառը հայերենի բարբառային բառապաշարի գործուն բաղադրիչներից է, հանդես է գալիս ոչ միայն հնչյունական զուգաբանությունների տեսքով, այլև որպես բառակապակցությունների, դարձվածային կառույցների և բաղադրյալ կազմությունների մաս: Մի շարք վայրերում գործածվում են հոմանիշներ: Բարբառներին բնորոշ չեն կրոնակեղեցական տերմինաբանությանը բնորոշ *Արարիչ*, *Բարձրյալ* անվանումները, քանի որ ունեն գրքային-գե-

⁵⁷ Քյուփեյան Հ., 2008, 259:

⁵⁸ Օրինակներն ըստ բ.գ.թ., դոցենտ, բարբառակիր Ա. Սուվարյանի (բանավոր հաղորդում):

⁵⁹ Օրինակներն ըստ բ.գ.թ., դոցենտ, բարբառակիր Վ. Կատվայանի (բանավոր հաղորդում):

դարվեստական ոճական առանձնահատկություններ: Տեղ-ը բարբառային խոսքում հիմնականում աշխարհիկ բովանդակությամբ է կամ նշանակում է ընդհանրապես «հոգևոր սպասավոր»:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աղամյան Հ., – 1969, Մոսկան-Սասունի բարբառը (թեկն. ատենախոսություն), Երևան, 1969:

Աթայան Է., – 2005, Հոգի և ազատություն, Երևան, 2005:

Ալավերդյան Ս., – 1970, Արդվինի բարբառը (թեկն. ատենախոսություն), Երևան, 1970:

Աճառեան Հ., – 1913, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:

Աճառեան Հ., – 1926, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1926, հ. 4:

Աճառյան Հ., – 1952, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1952:

Աճառյան Հ., – 1953, Քննություն Առտիայի բարբառի, Երևան, 1953:

Աճառյան Հ., – 2003, Քննություն Կիլիկիայի բարբառի, Երևան, 2003:

Աճառյան Հ., – 2009, Պոստհայ անգիր բանասիրություն, Երևան, 2009:

Ամատունի Ս., – 1912, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:

Անդրեասյան Տ., – 1967, Սվեդիայի բարբառը, Երևան, 1967:

Ասատրյան Մ., – 1962, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երևան, 1962:

Ասատրյան Մ., – 1968, Լոռու խոսվածքը, Երևան, 1968:

Բաղդամյան Ռ., – 1961, Կոզենի բարբառը, Երևան, 1961:

Բենսե, – Բուլանուխի բարբառը, հ. 2, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ձեռագիր նյութ:

Գաբամանեան Ս., – 1910, Նոր բառգիրք հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1910:

Գալստյան Լ., – 2006, Աշնակ գյուղի բարբառային իրավիճակը (թեկն. Ատենախոսություն), Երևան, 2006:

Գասպարյան Գ., – 1947, Բառարան Խ. Աբովյանի երկերի (բարբառային և օտար բառեր), Առանձնատիպ Խ. Աբովյանի երկերի 4-րդ հատորից, Երևան, 1947:

Գասպարյան Հ., – 1966, Հաջրնի բարբառը, Երևան, 1966:

Գևորգյան Լ., – 2012, Ծիրակի տարածքի խոսվածքների փոխհարաբերությունը (թեկն. ատենախոսություն), Երևան, 2012:

Գրիգորյան Ս., – 2012, Նորաբանությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցում», Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, 2012, էջ 64:

Երրորդութիւն, – 1870, Երրորդութեան վարդապետութեան վրայ քրիստոնէից եկեղեցիներուն ունեցած տարբերութիւնները, «Յոյս» օրագիր բանասիրական, գլխավոր ի վանս Չարիսափան Սուրբ Աստուածածնի, 1870, N 46, էջ 92–94:

Թումանյան Հ., – <http://granish.org/hovhannes-tumanyan>:

Թուրշյան Հ., – Վանի բարբառի բառարան (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ձեռագիր նյութ):

Ժամագիրք ատենի, – 1999, Վաղարշապատ, 1999:

Ժամագիրք ատենի, – 2003, Անթիլիաս, 2003:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, – **Երևան, 1969–1980:**

Լուսենց Ա., – 1982, Արեշի բարբառը, Երևան, 1982:

Կարստ Յ., – 2002, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Երևան, 2002:

Համբարձումյան Վ., – 2002, Հայերեն *աստված* բառի ծագումն ու տիպաբանությունը, Երևան, 2002:

Հանսնյան Գ., – 1995, Սվեդիայի բարբառը (Խտրբեկի խոսվածքը), Երևան, 1995:

Հանեյան Ա., – 2005, «Ծիածան» հասկացության բառագուգարանությունների լեզվաաշխարհագրական բնութագիրը և հոգևոր-մշակութային արժեքը, Նյութեր մաշտոցյան գրերի 1600-ամյակին նվիրված գիտաժողովի, Երևան, 2005, էջ 87–104:

Հոգին սուրբ, – 1870, Հոգւոյն սրբոյ վրայ քրիստոնէից եկեղեցիներուն մէջ եղած տարբերութիւնները, «Յոյս» օրագիր բանասիրական, գԱրմաշ ի վանս Չարխափան Սուրբ Աստուածածնի, 1870, N 48, էջ 141–142:

Ղանալանյան Ա., – 1951, Հայկական առածանի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1951:

Ճիգմէճեան Պ., – 1954–1957, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, Հալէպ, 1954–1957:

Մկրտչյան Ն., – 1971, Բուրդուրի բարբառը, Երևան, 1971:

Մսերեանց Մ., – 1861–1862, Ստուգաբանութիւն անուանս *Աստուած*, «Ծռաքաղ» (ամսագիր), Մոսքուա, 1861–1862, հ. երրորդ, էջ 8–10:

Ջահուկյան Գ., – 1972, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

Սարգսեանց Ս., – 1883, Ագուլեցոց բարբառը (գօկերի լեզուն), Մոսկվա, 1883:

Վարդանյան Ս., – 2009, Կրօնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Երևան, 2009:

Տեր-Պողոսյան Գ., – 1921–1922, Հավարիկի բարբառը, «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», Վաղարշապատ, 1921–1922, գիրք Ա–Բ, էջ 177:

Քյուփեյան Հ., – 2008, Բեյլանի բարբառը (թեկն. ատենախոսություն), Երևան, 2008:

PhD in Philology
Institute of Language of NAS RA
haykanushm@mail.ru

SUMMARY

The Divine Word is not expressed in various word signs in dialect vocabulary. In order to state the symbol of freedom or the mysterious existence a range of words with their phonetic variants are used in dialects.

The word *uuunʲuɔð* (astvac) – “God” in some dialects has saved its literary form (Erznka, Artamet, Berkri, Adapazarı, Manazkert, Julfa and so on.). In many dialects there are about 55 different phonetic isoglosses [*uuunʲoɔ̃* (astwawj), Marash, *puŋʲuɔ̃* (ðsdvaj), Sasoun, Ynguznag, *uuuʲuɔð* (aspac), Van, Timar, *uuʲpoɔ̃* (asbawj), Zeytun].

The word “God” is expressed in the Holy Trinity, and the synonyms of the words Father, Son and Holy Spirit, are very rarely found. In Armenian dialects the most common dialectal phonetic variants of the word “God” can be met. Structures with different roots are not widespread in popular speech.

In the course of our research in the area of Aramo Antakya we met only one dialectal example with the meaning of the Holy Trinity. *Սաւրիսի Էրոյթօղլիւս գ՛Դուրիւս ու զՇրթթիւս ու զՀօբէլի սաւրիսիւ* (*sawrp^c ērawrt^cawēyna zduda u zjđt^ca u zhawk^cēyn sawrp^ca*).

The individuals who prioritize their ego in the core of their soul accept Freedom-God as the lord master and judge as well as the lord of the heavens and the earth, all creations and future creations entitling him *վերնէրի տէր* (vērnēri tēr) “master of heavens” (Ararat), *իյգիկք և իյգիյ ընծէրաւնի* (iygink^c ev iygiy ənjelani) – “the lord of the world and the sky” (Hajn), *դ’աղաւթ* (d’agavē) – “judge” (Sebastia), *էջնաւոր դաւաւոր* (ēynavawr dadavawr) – “heavenly judge” (Polis), etc.

In our national language mentality the concept of God is associated with the signs of the boundlessness, the heavens, blue, azure. *յէրէ կ’աւրմուն* (yērē k’ap^yut) – “blue above” (Ghapan), *թ’աւ աւսնիւծ* (t^car astvac)- “blue God” (Gharabagh), *յեռնային* (yeṙnayin) – “heavenly” (Sghnagh), *անխն* (anxun) “the only one”, *անէզակաւն* (anezakan) – “unrivalled” (Van), *անսահման* (anahun) – “boundless” (Aparan, Bulanukhum) etc.

In Armenian dialects we frequently meet word combinations, idioms, oaths, proverbs, blessings, etc. formed with the word *աւսնիւծ* (astvac) “god”. Such language coinages have both positive and negative values. [For example: *աւսնիւծ միտն ա լիկ* (astoc mič^cin man a ēkel), Lori, word for word translation – “The Lord was walking there”, which means “this area is very nice”, *աւսնիւծ հրդեհը վրա իլալ* (astuco hṙḏēc^cə wra ilal), Karabakh, word for word translation – “to be on the way of The Lord”, which means “don’t lose conscience and human type”, *աւսնիւծ քէզի խէնդաւսնաւ ոչ* (aspaj k^cēzi xēndasna awč^c), Hamshen, word for word translation – “The Lord doesn’t give you joy” which means “you don’t earn luck, you are a bad man”, etc.].

These dialectal cases confirm that human being accepts only the undoubted and absolute dominance of the Creator, dominance which doesn’t limit the freedom of the individual. Both God and human are dominant in their territory.

АЙКАНУШ МЕСРОПЯН

Кандидат филологических наук,

Институт языка НАН РА

haykanushm@mail.ru

СИМВОЛ «БОГ» В АРМЯНСКИХ ДИАЛЕКТАХ

РЕЗЮМЕ

В народном мышлении Бог воспринимается как символ свободы и света. Недоступность и необъяснимость в народе называют светом – противопоставляя тьме. Уровень национального духа выражается религиозным символом, то есть – «Всевышним».

Языковая версия символа «Бог» идет от индоевропейского праязыка, принадлежит к активному словарному слою армянского языка, типична для всех стадиях литературного армянского языка, а также региональным языковым вариантам. Слово «Бог» очень часто встречается в армянской письменной речи, является ключевой единицей христианской терминологии (В. Амбарзумян, «Этимология слова «Бог», 2002, 11).

Со временем рассматривается концепция понятия «бог»: происходит семантическая идентификация. Взамен формы множественного числа «Боги» – указывающего на политеизм, начинает употребляться единственное число, что подчеркивает христианскую доктрину единобожия, в лице Иисуса Христа.

Как в литературном армянском языке, так и в армянских диалектах Бог характеризуется рядом специфических эпитетов. В разных словарях армянского языка изложен ряд слов и словосочетаний определяющих Бога (например: *самый благочестивый, лечащий всех, царь всех, самый яркий из всех, заботящийся обо всех* и т. д.). Большая часть выражений имеет узкий диапазон, является книжной языковой единицей и встречается только в религиозной литературе.

Слово *սիւնիւծ* (astvac) «Боже» в некоторых диалектах сохраняет литературную форму (Ерзка, Артамет, Беркри, Адабазар, Маназкерт, Джулфа и т. д.). Во многих диалектах имеются разные фонетические изоглоссы, число которых 55 [*սիւնիւօճ* (astwawj), Мараш, *սիւնիւճ* (əsdvaj), Сасун, Ингузнаг, *սիւնիւծ* (aspac), Ван, Тимар, *սիւրօճ* (asbawj), Зейтун].

Символ «Бог» и божественная сила в диалектном словарном запасе ассоциируются со словами *отец, владыка, свет, небо, безграничный, голубой, синий*.

Со словом «Бог» ассоциируется Святая Троица, и редко встречаются синонимы к понятиям «Отец», «Сын» и «Святой Дух». В армянских диалектах чаще всего встречаются диалектные фонетические варианты слова «Бог». *Разнокоренные* структуры в народной речи не имеют широкого распространения.

В процессе нашего исследования в местности Арамо Антакии встретился лишь один диалектный пример, означающий «Святая Троица»: *ւառքիւն զԴուռնիս ու զՋրառնիս ու զՀորէնիս ւառքիւն* (sawrp^c ērawrt^cawēyna zduda u zjdt^ct^ca u zhawk^cēyn sawrp^ca).

В диалектной речи слово «бог» имеет следующие синонимы: *վերնէրի տէր* (vērñēri tēr) «владыка всевышний» (Арапат), *իյգինք և իյգի բնակիւնի* (iygink^c ev iygi bñelani) – «создатель неба и земли» (Аджн), *դ'աղաւթ* (d'agavēr) – «судия» (Себастья), *Է՛նիւօր դաւաւոր* (ē'ynavawr dadavawr) – «небесный судья» (Константинополь).

В армянских диалектах часто встречаются словосочетания, фразеологизмы, клятвы, пословицы, благословения и т. д. составленные со словом *աստուծ* (astvac) «бог». Такие языковые образования имеют и положительные, и отрицательные значения [например: *աստուծ միջին միւս ա լիլի* (astoc mič'in map a ēkel), Лори, дословно – «бог проходил там», то есть «эта местность очень красива», *աստուծոյ հրէցը քիսի իրի* (astuco hñēs^cd wra ilal), Карабах, дословно – «быть на пути бога», то есть «не потерять совесть и человеческий образ», *աստուծ քէզի խէնասնա աւճ* (aspaj k^cēzi xēndasna awč^c), Амшен, дословно – «Бог тебя не радовал бы», то есть «ты не достоин добра, ты плохой человек» и т. д.].

Исследование показывает, что наиболее интересные *словообразовательные* варианты со словом «Бог» характерны для западной группе армянских диалектов. Религиозной диалектной речи не типичны *словообразования со словами* «Творец», «Искупитель», «Всевышний», «Владыка» и т. д.